



«Այբ» ավագ դպրոց

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ 2022 թ., ապրիլ
Տևողություն՝ 1 ժամ 15 րոպե
Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:

Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:

Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:

Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է 4 տպագիր էջից:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (20 ՄԻԱՎՈՐ)

Ուշադրություն.

1. Հայոց պատմության բաժնում 4 թեմա է ներառված, յուրաքանչյուր շրջափուլից՝ ներկայացված է մեկական թեմա՝ բաղկացած երկու հարցերից:
2. Ընտրել ք թեմաներից ցանկացած երկուսը և պատասխանել ք հարցերին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԹԵՄԱ 1. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ. ԱՐՏԱՇԵՍ I (10 ՄԻԱՎՈՐ)

1. Ե՞րբ և ինչպե՞ս Արտաշես I-ը իշխանությունն ձեռք բերեց Մեծ Հայքում: Ներքին և արտաքին քաղաքական ո՞ր իրադարձությունները նրան հնարավորություն տվեցին հռչակելու Մեծ Հայքի անկախությունը:

- Ք. ա. III դարի վերջին Հայաստանը թուլացել էր, նպաստավոր պայմաններ էին ստեղծվել Հայաստանը գրավելու Մելիկյանների վաղեմի ծրագրի իրագործման համար: Ք. ա. 201 թ. Մելիկյան արքա Անտիոքոս III-ի գործերը հայազգի գորավարներ Արտաշեսի և Ջարեհի գլխավորությամբ արշավեցին Հայաստան: Երվանդ IV Վերջինը զոհվեց մայրաքաղաք Երվանդաշատի պաշտպանության ժամանակ, գրավվեց նաև Մեծ Հայքի հոգևոր կենտրոն Բագարանը: Մեծ Հայքում վերջ դրվեց Հայկազունների Երվանդական ճյուղի իշխանությանը: Արտաշեսը Մեծ Հայքում, իսկ Ջարեհը Ծոփքում նշանակվեցին սելևկյան կառավարիչներ՝ ստրատեգոսներ:

Մելիկյանները ծրագրել էին ամբողջ Փոքր Ասիան գրավել, սակայն տարածաշրջանի նկատմամբ մեծացել էր նաև Հռոմի հետաքրքրությունը: Կողմերի միջև բախում էր հասունանում: Ք. ա. 190 թ. Փոքր Ասիայի Մագնեսիա քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Մելիկյանները պարտություն կրեցին Հռոմից: Առաջացած նպաստավոր միջազգային իրադրությունից օգտվելով՝ Ք. ա. 189 թ. Արտաշեսը Մեծ Հայքում (Ջարեհն էլ Ծոփքում) վերականգնեց հայոց անկախությունը: Հռոմը, որին ձեռնտու էր իր հակառակորդ Մելիկյան տերության թուլացումը, անմիջապես ճանաչեց նրա անկախությունը:

2. Ի՞նչ բարենորոգումներ է կատարել Արտաշես I-ը: Ներկայացրե՛ք դրանցից երեքը և բացատրե՛ք դրանց կարևորությունը:

Մշակերտը պետք է քննարկի ստորև ներկայացված բարենորոգումներից երեքը և փորձի ինքնուրույն բացատրել դրանց կարևորությունը:

- **Ռազմական և վարչական բարեփոխումներ:** Նա հայկական բանակը բաժանեց չորս սահմանակալ զորավարությունների՝ ըստ աշխարհի չորս կողմերի: Ստեղծվեց կանոնավոր, մարտունակ և լավ զինված բանակ: Պետության կառավարումը բարելավվելու նպատակով նա Մեծ Հայքի տարածքը բաժանեց 120 վարչական շրջանների կամ գավառների, որոնք հունա-հռոմեական հեղինակներն անվանում էին ստրատեգիաներ կամ պրեֆեկտուրաներ: Պետության կարևորագույն պաշտոններում Արտաշես I-ը նշանակեց իր մերձավորներին: Ավագ որդի

Արտավազդին (ապագա Արտավազդ I-ին) նա նշանակեց սպարապետ և արևելյան զորավարության ղեկավար: Արևմտյան զորավարությունը տվեց մյուս որդի Տիրանին, հյուսիսայինը՝ Ջարեհ անունով որդուն, հարավայինը՝ իր դայակ Մմբատ Բագրատունուն: Արքայորդի Վրույրը նշանակվեց հազարապետ. նրան պատմահայր Մովսես Խորենացին հիշատակում է որպես «այր իմաստուն և բանաստեղծ»: Սյուս որդուն՝ Մաժանին, արքան դարձրեց քրմապետ:

Հողային բարեփոխումը: Սրվել էին հարաբերությունները գյուղական համայնքների և մասնավոր հողատերերի միջև, քանի որ վերջիններս բռնագավթում էին համայնականների հողերը: Այդպես շարունակվելու դեպքում գյուղացին այլևս ի վիճակի չէր լինի հարկեր վճարելու և զինվոր տալու պետությանը: Հայոց արքան, հասկանալով այդ դրության վտանգը, արգելեց գյուղացիների հողակտորների գավթումը: Նա սահմանափակեց քարեր տեղադրել տվեց համայնական և մասնավոր հողերի միջև: Այդ սահմանափակումների վրա պահպանվել են արամեատառ արձանագրություններ, որոնցում արքան ներկայանում է Երվանդական տոհմանունով: Այդպես Արտաշեսը հավաստում էր, որ ինքը ևս սերում է Հայկագուն-Երվանդականներից: Արտաշես I-ի օրոք մեծ զարգացում ապրեց երկրի տնտեսությունը: Մովսես Խորենացու բնորոշմամբ՝ նրա օրոք Հայոց աշխարհում «անմշակ հող չէր մնացել»:

Նախնիների պաշտամունքի կարգ: Թագավորական իշխանության հեղինակությունը ժողովրդի աչքում բարձրացնելու նպատակով Արտաշես I-ը ամրապնդեց թագավորական նախնիների պաշտամունքը, որը Հայաստանում առկա էր դեռևս Վանի թագավորության ժամանակաշրջանից: Արտաշատում կառուցվեց Մայր դիցուհի Անահիտի տաճարը: Այնտեղ կանգնեցվեցին Արտաշեսի նախնիների արձանները, որոնց ժողովուրդը պետք է երկրպագեր:

Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը: Ք. ա. 185 թ. Այրարատյան դաշտում՝ Երասխ և Մեծամոր գետերի ջրկիցում, հիմնադրվեց նոր մայրաքաղաք Արտաշատը: Պատմագիր Պլուտարքոսի հաղորդմամբ՝ մայրաքաղաքի տեղն ընտրել և թագավորի առաջարկով քաղաքի հատակագիծը կազմել է Կարթագենի նշանավոր զորավար Հաննիբալը: Նա, հալածվելով Հռոմից, ժամանակավոր ապաստան էր գտել Հայաստանում: Դրանից ելնելով՝ հռոմեական պատմագրության մեջ Արտաշատը հիշատակվում է որպես «Հայկական Կարթագեն»՝ անառիկ դիրքը նկատի ունենալով: Կառուցվեցին ճոխ ապարանքներ, տաճարներ, թատրոն և այլ շինություններ: Արտաշատը դարձավ ժամանակի խոշորագույն քաղաքներից մեկն աշխարհում, գտնվում էր առևտրական նշանավոր տարանցիկ մայրուղիների խաչմերուկում:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԹԵՄԱ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ (10 ՄԻԱՎՈՐ)

1. Ինչու՞ IX-րդ դարի երկրորդ կեսին հնարավոր եղավ վերականգնել Հայաստանի անկախությունը: Բացատրե՛ք նվազագույնը մեկ արտաքին և մեկ ներքին պատճառ:

- Արտաքին պատճառներ: IX-րդ դարում Արաբական խալիֆայությունը սկսել էր թուլանալ և անկման ուղի բռնել: Նրան ենթակա երկրներում, այդ թվում և Հայաստանում, արաբական տիրապետությունը թոթափելու ձգտումն ավելի ու ավելի էր ուժեղանում: Ժողովրդական ապստամբությունները և գահակալական կոիվները խարխալում էին խալիֆայության հիմքերը: Խալիֆայության ծանր դրությունից օգտվում էր նրա մշտական հակառակորդ Բյուզանդական կայսրությունը՝ ամեն կերպ աջակցելով հակաարաբական կենտրոնախույս ուժերին: Խրախուսվում էին նաև Հայաստանի անջատողական քայլերը: Այդ պատճառով արաբաբյուզանդական հարաբերությունները խիստ սրվել էին: Թուլացող և կազմալուծվող խալիֆայությունը հարկադրված էր ենթակաների հանդեպ որդեգրել զիջումների քաղաքականության:

Ներքին պատճառներ: Արաբական տիրապետության դեմ VIII-IX դդ. ժողովրդական-ազատագրական ապստամբություններ բռնկվեցին Հայաստանում: Ճիշտ է, արաբական իշխանություններին հաջողվում էր ճնշել այդ ելույթները, սակայն դրանով չէին կարողանում կանխել ազատագրական պայքարի հետագա ընթացքը: Հայաստանի անկախության վերականգնման համար ստեղծվել էին նպաստավոր պայմաններ: Անկախությունը վերականգնելու հարցում միակամ էին հայ հասարակության բոլոր խավերը: Արաբական պետության թուլացման և տրոհման ժամանակաշրջանում երկրի տնտեսական կյանքում տեղի էին ունենում խոշոր փոփոխություններ: Ամրապնդվում, ընդարձակվում և ժառանգական էին դառնում հայ իշխանների տիրույթները: Զարգանում էր տնտեսությունը, վերելք էին ապրում գյուղատնտեսությունը և արհեստագործությունը: Տնտեսապես և ռազմականապես զորեղացող հայ իշխաններն անկախության էին ձգտում: Նրանք հնարավորություն ունեին և գլխավորեցին հայկական պետականությունը վերականգնելու համաժողովրդական շարժումը:

2. Ինչու՞ հենց Բագրատունյաց իշխանական տունը գլխավորեց իշխանության համար պայքարը: Ներկայացրե՛ք ինչպես փաստական անկախության հաստատման, այնպես էլ միջազգային ճանաչման ընթացք:

- Աշոտ Բագրատունին գլխավորեց երկրի անկախության վերականգնման գործընթացը: Խալիֆայության թուլացումից Հայաստանում ամենից հմտորեն օգտվում էին Բագրատունիները: Նրանք ձգտում էին իրենց իշխանությունն ու ազդեցությունը տարածել ամբողջ Հայաստանում: Խալիֆայությունը, համոզվելով, որ բռնությամբ հնարավոր չէ հնազանդ պահել դեպի Բյուզանդիա հակվող հայ իշխաններին, ստիպված էր զիջումների դիմել: 855թ. երկրի սպարապետ հաստատվեց Աշոտ Բագրատունին: Նա 862թ. նշանակվեց նաև Հայոց իշխանաց իշխան: Նրանց հանձնվեց հարկահանության իրավունքը, իսկ հարկերն էլ կրճատվեցին: Նա կարողացավ իր գերիշխանությունը տարածել ոչ միայն Արծրունի, Սյունի, արցախյան և այլ նշանավոր իշխանական տների, այլև վրաց և աղվանից իշխանների վրա: Աշոտը վերականգնեց հայոց զինված ուժերը՝ բանակի թիվը հասցնելով 40 հազարի: Նա իր եղբայր Աբասին նշանակեց

բանակի հրամանատար՝ սպարապետ: Հայաստանի տարածքում գտնվող արաբական ամիրայություններ էլ ընդունեցին նրա գերիշխանությունը: Այսպիսով՝ Բագրատունիների ձեռքն անցավ երկրի վարչական, տնտեսական և ռազմական իշխանությունը: Երկիրն առաջ էր գնում անկախության ուղիով: Արաբական իշխանությունը Հայաստանում փաստորեն դարձավ անվանական և սկսվեց պայքար Բագրատունիների ստեղծած պետականության միջազգային ճանաչման համար:

Աշխարհիկ և հոգևոր վերնախավի նախաձեռնությամբ 869թ. հայ իշխանների հատուկ ժողով հրավիրվեց, որը միահամուռ որոշեց Աշոտ Բագրատունուն հռչակել Հայոց թագավոր և վերջինիս թագավորական իշխանությունը պաշտոնապես ճանաչելու համար ժողովը դիմեց խալիֆին: Սակայն խալիֆայությունը երկար ժամանակ ձգձգում էր Հայոց թագավորության ճանաչումը: Բյուզանդիան իր հակառակորդ Արաբական խալիֆայությունը թուլացնելու նպատակով խրախուսում էր Հայաստանի անկախանալը և շտապեց դաշինք կնքել նրա հետ: 876 թ. Բյուզանդական կայսր հայազգի Վասիլ I-ը հատուկ պատգամավորություն է ուղարկում Աշոտ Բագրատունու մոտ: Կայսրը հայտնում է, որ ինքը ծագում է հայ Արշակունիներից, և քանի որ Բագրատունիները թագադիր ասպետներ են եղել, նրանից թագ է խնդրում: Ի նշան փոխադարձ բարեկամության՝ Աշոտը թագ է ուղարկում Վասիլ I-ին:

Հանդիպելով հայ ժողովրդի միահամուռ դիմադրությանը՝ նոր խալիֆը 885թ. արքայական թագ և թանկարժեք հանդերձներ ուղարկեց Աշոտ Բագրատունուն՝ նրան ճանաչելով Հայոց թագավոր: 885 թ. օգոստոսի 26-ին մեծ հանդիսավորությամբ Աշոտ Բագրատունին օծվեց Հայոց թագավոր:

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ

ԹԵՄԱ 3. ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ (10 ՄԻԱՎՈՐ)

1. Ի՞նչ է ցեղասպանությունը: Ո՞ր փաստաթղթով և ե՞րբ է տրվել դրա իրավական ձևակերպումը:

- Ցեղասպանություն համարվում են այն գործողությունները, որոնք գործադրվում են որևէ ազգի, ցեղային կամ կրոնական համայնքի լիակատար կամ մասնակի ոչնչացման նպատակով: 1948 թ. դեկտեմբերի 9-ին Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունվեց «Ցեղասպանության հանցագործությունները կանխելու և դրա համար պատժի մասին» փաստաթուղթը, որտեղ էլ տրվեց ցեղասպանության իրավական ձևակերպումը:

2. Ե՞րբ է սկսվել և ի՞նչ փուլերով է կազմակերպվել Մեծ եղեռնը: Բացատրե՛ք ցեղասպանության երկու հետևանք:

- Մեծ եղեռնը փաստացի սկսվել է 1914 թ. հոկտեմբերի վերջին և շարունակվել մինչև 1916 թ. ամառը:

Առաջին փուլ՝ զրկել հայերին դիմադրելու հնարավորությունից: Ջորահավաքի ընթացքում օսմանյան բանակ զորակոչվեց 18–45 տարեկան ավելի քան 300 հազար հայ, որպեսզի ոչնչացնեն կտվելու ունակ երիտասարդներին: 1914 թ. վերջից նրանց մեծ մասը զինաթափվեց, տեղափոխվեց թիկունք, այնուհետև՝ ոչնչացվեց:

Երկրորդ փուլ՝ վերացնել հայության ազգային, քաղաքական և հոգևոր ղեկավար գործիչներին, զրկել հայերին կազմակերպող և ղեկավարող ուժից: 1915 թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսում ձերբակալվում և աքսորվում են 600-ից ավելի հայ մտավորականներ՝ գրողներ, արվեստագետներ, բժիշկներ, մանկավարժներ, հասարակական գործիչներ: Ձերբակալվածների թվում էին նշանավոր երգահան Կոմիտասը, գրողներ Գրիգոր Զոհրապը, Ռուբեն Սևակը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, բժիշկ Նազարեթ Տաղավարյանը և ուրիշներ, որոնց մեծամասնությունը դաժանորեն սպանվեց աքսորի ճանապարհին: Հունիսին ձերբակալում և մահապատժի են ենթարկվում նաև Հնչակյան կուսակցության 20 գործիչներ՝ Փարամազի գլխավորությամբ:

Երրորդ փուլ՝ ցեղասպանական մեծածավալ գործողությունը՝ համատարած կոտորածներ, բռնի տեղահանություն և աքսոր: 1914 թ. աշնանից և հատկապես 1915 թ. գարնանից սկսվում են արևմտահայ բնակչությանը քշվեցին Միջագետքի և Սիրիայի համակենտրոնացման ճամբարներ, հատկապես՝ Դեր Զոր: 600 հազար հայ տարագիրների կեսը նույնպես ոչնչացվեց:

Մշակերտը կարող է բացատրել ստորև ներկայացված հետևանքներից երկուսը:

Արևմտյան Հայաստանի հայաթափում, հայերի հայրենագրկում: Արևմտյան Հայաստանում և կայսրության մյուս նահանգներում ապրող ավելի քան 2,5 միլիոն հայերից 1,5 միլիոնը դարձավ Մեծ եղեռնի զոհ:

Հայկական սփյուռքի ձևավորում: Եղեռնից փրկված արևմտահայերի մեծ մասը սփռվեց աշխարհով մեկ: Նրանց մի մասը՝ մոտ 250 հազար մարդ, հիմնականում կանայք և երեխաներ, մնաց բուն երկրում և մահմեդականացվեց: Եղեռնից փրկվածներից մոտ 300 հազար մարդ ապաստան գտավ Արևելյան Հայաստանում և Այսրկովկասի տարբեր շրջաններում:

Նյութական կորուստ: Ժամանակի դրամով հաշված՝ առնվազն 20 միլիարդ ֆրանկ ոսկի: Հայերի շարժական և անշարժ գույքն անցավ տեղական իշխանություններին կամ

Թալանվեց ու յուրացվեց թուրքերի և քրդերի կողմից: Ոչնչացվեցին հայկական պատմամշակութային հազարավոր արժեքներ: Հայկական հազարավոր եկեղեցիներ ու վանքեր ավերվեցին կամ կողոպտվեցին: Վերացվեցին 1500 հայկական դպրոցներ ու վարժարաններ: Ոչնչացվեցին 20 հազարից ավելի հայկական ձեռագրեր և հնաստիպ գրքեր և այլն:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

ԹԵՄԱ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ. ՄԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ (10 ՄԻԱՎՈՐ)

1. Ե՞րբ և ո՞ւմ միջև է ստորագրվել Սևրի պայմանագիրը: Ներկայացրե՛ք Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հոդվածները:

- 1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սևր կոչվող արվարձանում Անտանտի երկրները սուլթանական Թուրքիայի հետ կնքեցին հաշտության պայմանագիր: Գլխավոր դաշնակից տերությունների հետ միասին պայմանագիրը ստորագրեց նաև Հայաստանը: Պայմանագրի 88–93-րդ հոդվածները վերաբերում էին Հայաստանին: Սևրի պայմանագրով Օսմանյան Թուրքիան Հայաստանը ճանաչում էր ազատ և անկախ պետություն: Հայաստանին էին անցնելու Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգները ոչ ամբողջությամբ՝ ընդամենը 90 հազար քառ. կմ, ելքով դեպի Սև ծով: Դա նշանակում էր, որ Միացյալ, Անկախ Հայաստանի ընդհանուր տարածքը հանրապետության (Արևելյան Հայաստանի) առկա 70 հազար քառ. կմ-ի հետ կազմելու էր 160 հազար քառ. կմ: Հայ-թուրքական պետական սահմանը որոշելու էր ԱՄՆ-ի նախագահը, որն էլ նույն թվականի նոյեմբերի 22-ին ստորագրեց Միացյալ, Անկախ Հայաստանի իրավարար վճիռը (փաստաթուղթը) համապատասխան քարտեզով:

2. Ինչու՞ չիրականացավ և ի՞նչ փոփոխությունների ենթարկվեց Սևրի պայմանագիրը հետագա կոնֆերանսների ընթացքում:

- Սևրի պայմանագիրը չվավերացվեց՝ մնալով որպես չիրագործված միջազգային փաստաթուղթ: Գլխավոր պատճառն այն էր, որ Թուրքիայում սկսվել էր ազգայնական «Միլլի» շարժում՝ թուրք գեներալ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ, և Սևրի պայմանագիրը ստորագրած սուլթանական կառավարությունը երկրում այլևս չունեի փաստական իշխանություն: Այն պատկանում էր Մուսթաֆա Քեմալի գլխավորած Անկարայի կառավարությանը, որը չճանաչեց Սևրի պայմանագիրը և դիմեց դիվանագիտական և ռազմական բոլոր միջոցներին՝ այն տապալելու համար: Բացի այդ, տարածաշրջանում գործոն էր դառնում նաև Խորհրդային Ռուսաստանը, որի հետ Քեմալական Թուրքիան սկսեց համագործակցել ընդդեմ Հայաստանի: Իսկ տերությունների համար մեծ կարևորություն ուներ Թուրքիային Ռուսաստանի դեմ ուղղորդելը: Հայաստանի դաշնակից համարվող պետությունները՝ Ֆրանսիան, Իտալիան, ապա նաև Մեծ Բրիտանիան ճնշում չգործադրեցին քեմալականների վրա: Ինչպես Սևրի պայմանագիրը, այնպես էլ դրանից բխող հայ-թուրքական սահմանի վերաբերյալ Վիլսոնի իրավարար վճիռը չիրագործվեցին:

Երբ պարզ դարձավ, որ Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հոդվածները չեն իրագործվելու, Անտանտի երկրները Լոնդոնի կոնֆերանսում (1921 թ. փետրվար-մարտ) առաջ քաշեցին Թուրքիայի տարածքում այսպես կոչված «հայկական ազգային օջախ» ստեղծելու գաղափարը: Այսինքն՝ որևէ հաստատուն բնակավայր պետք է ընտրվեր (Թուրքիայում կամ նրանից դուրս), որտեղ պետք է հավաքեին գաղթական հայերին: Այդ գաղափարը կտրականապես մերժվեց Թուրքիայի կողմից, իսկ արդեն 1923 թ. կնքված Լոզանի պայմանագրով տերություններն ընդունում էին Թուրքիայի տարածքային ամբողջականությունը և վերջնակապես չեղարկում Սևրի պայմանագիրը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ (12 ՄԻԱՎՈՐ)

Ուշադրություն.

1. Համաշխարհային պատմության բաժնում հարկավոր է պատասխանել երկու առաջադրանքներին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1 (6 ՄԻԱՎՈՐ)

ՆՈՐ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Աղբյուր Ա. *Ստորև տրված է հատված ԱՄՆ Անկախության հռչակագրից (ընդունված 1776 թ. հուլիսի 4-ին Երկրորդ Մայրցամաքային կոնգրեսում):*

Մենք ակնհայտ ենք համարում հետևյալ ճշմարտությունները. որ բոլոր մարդիկ ստեղծված են հավասար և իրենց Արարչի կողմից օժտված որոշակի անկապտելի իրավունքներով, որոնց թվում են Կյանքը, Ազատությունը և Երջանկության ձգտումը, որ այս իրավունքներն ապահովելու համար հիմնվում են կառավարություններ [...], երբ կառավարման որևէ ձև կործանարար է դառնում այդ նպատակների համար, ապա ժողովրդի իրավունքն է փոխել կամ լուծարել այն և ստեղծել նոր կառավարություն [...]: Մեծ Բրիտանիայի ներկայիս թագավորի կառավարման պատմությունը անդուլ իրավազանցությունների և բռնավորության պատմություն է, որի անմիջական նպատակն է անսահմանափակ բռնապետություն հաստատել այս նահանգների նկատմամբ:

Աղբյուր Բ. *Մեջբերված հատվածը նշանավոր հասարակական և քաղաքական գործիչ Թոմաս Փեյնի 1776 թ. լույս տեսած պամֆլետից՝ է: 1774 թ. նա հաստատվել է Հյուսիսային Ամերիկայում և մասնակցել անգլիական գաղութների անկախության համար պայքարին:*

Բայց Բրիտանիան մայր երկիրն է, ասում են ոմանք: Ուստի նրա վարքն է՛լ ավելի ամոթալի է: Նույնիսկ գազանները չեն խժռում իրենց ձագերին, և ոչ էլ վայրենիներն են պատերազմում իրենց ազգակիցների հետ [...]: Բայց, պարզվում է, այն ճշմարիտ չէ կամ ճշմարիտ է մասամբ [...]: Ամերիկայի մայր երկիրը Եվրոպան է, այլ ոչ թե Անգլիան: Այս նոր աշխարհն ապաստան է դարձել քաղաքացիական ու կրոնական ազատության հալածյալ կողմնակիցների համար՝ Եվրոպայի բոլոր ծագերից: Նրանք այստեղ են ձողապրել ոչ թե մայրական գորով գրկից, այլ ճիվաղի դաժանությունից, և սա այնքանով է ճիշտ Անգլիայի վերաբերյալ, որ այն նույն բռնակալությունը, որ իրենց հողից վտարեց առաջին գաղթականներին, դեռ հետապնդում է նրանց սերունդներին:

Հարց 1. 18-րդ դարում Եվրոպայում տարածված հասարակական և քաղաքական ի՞նչ շարժման գաղափարներ են արտահայտված Աղբյուր Ա-ում: Պատասխանելիս աղբյուրից

* Պամֆլետ - հրապարակախոսական գրքույկ, որտեղ հեղինակը ծաղրում և քննադատում է առաջնորդների, տարբեր գործիչների գործունեությունը, քաղաքական-հասարակական կարգի բացասական երևույթները և այլն:

© «Այբ» կրթական հիմնադրամ

© Արարատյան բակալավորիատի քննական կենտրոն

համապատասխան հատվածները առանձնացրե՛ք և բացատրե՛ք թեմայի վերաբերյալ ձեր ունեցած գիտելիքների կիրառմամբ:

- Աղբյուր Ա-ում արտացոլված են 18-րդ դարում ծավալված լուսավորական շարժման գաղափարները: Լուսավորականները քննադատում էին հին կարգերը, միահեծան միապետությունը, պահանջում էին ազատություն, իրավահավասարություն, օրենքի գերակայություն: Աղբյուր Ա-ում էլ ժողովուրդը պահանջում է ճանաչել իրենց իրավունքը ստեղծելու այնպիսի կառավարություն, որը կապահովի նրանց ազատությունը և երջանիկ լինելու իրավունքը: Նաև Աղբյուրի Ա-ի հետևյալ տողերում՝ «բոլոր մարդիկ ստեղծված են հավասար և իրենց Արարչի կողմից օժտված որոշակի անկապտելի իրավունքներով, որոնց թվում են Կյանքը, Ազատությունը...» նկատելի է անգլիացի փիլիսոփա Ջ. Լոկի գաղափարական ազդեցությունը: Նա է առաջ քաշել այն գաղափարը, որ մարդիկ ի ծնե ազատ են, հավասար և անկախ:


Հարց 2. Աղբյուր Ա-ն և Բ-ն ինչպե՞ս են բնութագրում Հյուսիսային Ամերիկայի գաղութների նկատմամբ Բրիտանիայի վարած քաղաքականությունը: Համադրե՛ք աղբյուրների տեղեկությունը թեմայի վերաբերյալ ձեր ունեցած գիտելիքների հետ և բացատրե՛ք հյուսիսամերիկյան անգլիական գաղութների անկախության համար պայքարի մեկ պատճառ:

Աշակերտը պետք է նկատի երկու աղբյուրներում Հյուսիսամերիկյան գաղութների նկատմամբ Բրիտանիայի վարած քաղաքականության բնութագրում առկա ընդհանուր դժգոհությունները (Տե՛ս հետոյալ հատվածները՝ **Աղբյուր Ա** «Մեծ Բրիտանիայի ներկայիս թագավորի կառավարման պատմությունը անդուլ իրավագանցությունների և բռնավորության պատմություն է, որի անմիջական նպատակն է անսահմանափակ բռնապետություն հաստատել այս նահանգների նկատմամբ», **Աղբյուր Բ** «Նույնիսկ գազանները չեն խժռում իրենց ձագերին, և ոչ էլ վայրենիներն են պատերազմում իրենց ազգակիցների հետ... Այս նոր աշխարհն ապաստան է դարձել քաղաքացիական ու կրոնական ազատության հալածյալ կողմնակիցների համար՝ Եվրոպայի բոլոր ձագերից: Նրանք այստեղ են ձողապրել ոչ թե մայրական գորով գրկից, այլ ճիվաղի դաժանությունից, և սա այնքանով է ճիշտ Անգլիայի վերաբերմամբ, որ այն նույն բռնակալությունը, որ իրենց հողից վտարեց առաջին գաղթականներին, տակավին հետապնդում է նրանց սերունդներին»), և համադրելով այս դժգոհությունները համատեքստային գիտելիքի հետ՝ բացատրի անկախության համար պայքարի մեկ պատճառ: Շարադրանքում հարկ է նշել, որ XVII–XVIII դդ. Հյուսիսային Ամերիկայում ձևավորված անգլիական 13 գաղութներում հաստատվեց բազմազգ բնակչություն, հիմնականում՝ անգլիացիներ: Վերաբնակիչները հիմնականում կրոնական հալածյալներ էին, հողագուրկներ, հասարակությունից մերժվածներ: Շուտով ի հայտ եկան ձեռներեցներ, որոնք կազմակերպում էին տնտեսությունը՝ զարկ տալով գյուղատնտեսությանը, արհեստներին, առևտրին: Գաղութները ղեկավարում էին անգլիական արքայի կողմից նշանակված նահանգապետերը: Անգլիան խոչընդոտում էր դրանց զարգացումը, որպեսզի գաղութները մնան լոկ հույժի մատակարար: Ամերիկացիները սկսեցին գիտակցել գաղութային լուծը թոթափելու, ինքնիշխան պետություն ստեղծելու հրամայականը, ուստի և սկսեցին Անկախության համար պատերազմը, որն ընթացավ 1775–1783 թթ.:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2 (6 ՄԻԱՎՈՐ)

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

Աղբյուր 1. – Ծաղրանկարի հեղինակ՝ *Կուկրինիքսներ* (խորհրդային նկարիչների ստեղծագործական խումբ, 1938 թ.):



Աղբյուր 2. – Ստորև ներկայացված է հատված 1938 թ. հոկտեմբերին Բրիտանական խորհրդարանում պատգամավոր **Ուինսթոն Չերչիլի** ելույթից:

Ես մշտապես այն կարծիքին եմ եղել, որ խաղաղության պահպանումը կախված է ագրեսորին զսպելուց: Մարտ ամսին Հիտլերի կողմից Ավստրիայի զավթումից հետո ես դիմեցի կառավարությանը՝ կոչ անելով, որ Բրիտանիան Ֆրանսիայի ու մյուս տերությունների հետ համատեղ երաշխավորի Չեխոսլովակիայի անվտանգությունը: Եթե մենք հետամուտ լինեինք այդ քաղաքական կուրսին, ապա դեպքերի ընթացքը նման աղետալի դրության չէր հանգի [...]: Ժամանակի ընթացքում Չեխոսլովակիան կկլանվի նացիստական վարչակարգի կողմից [...]: Ես մտածում եմ նացիստական իշխանության աճը կասեցնելու բոլոր վատնված հնարավորությունների մասին: Պատասխանատվությունը պետք է կրեն նրանք, ովքեր վարում են մեր երկրի քաղաքականությունը: Նրանք չխաչընդոտեցին Գերմանիայի վերազինմանը և ոչ էլ պատեհ ժամանակին մեզ վերազինեցին: Նրանք թուլացրին Ազգերի լիգան [...]: Այդպիսով, փորձության ժամին նրանք մեզ թողեցին առանց հզոր ազգային պաշտպանության կամ միջազգային անվտանգության համակարգի:

Հարց 1 Ի՞նչ իրադարձություն է պատկերված Աղբյուր Ա-ում, ե՞րբ և ինչու՞ է այն տեղի ունեցել: Ի՞նչ դիրքորոշում ունի Աղբյուր Բ-ի հեղինակը այս իրադարձության վերաբերյալ:

Խորհրդային ծաղրանկարում ներկայացված է Մյունխենյան գործարքը: 1938 թ. սեպտեմբերին Մյունխենում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Գերմանիայի մասնակցությամբ համաժողով տեղի ունեցավ: Գերմանիան պահանջում էր «իրեն վերադարձնել» Չեխոսլովակիայի գերմանաբնակ Սուդեթի մարզը: Որոշում կայացվեց մարզը հանձնել Գերմանիային՝ «հանուն կայուն խաղաղության»: Ծաղրանկարում էլ պատկերված են Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները, որոնք գայլին՝ այս դեպքում Հիտլերին, սկուտեղով մատուցում են Չեխոսլովակիան, որպեսզի նա իր հայացքն ուղղի դեպի արևելք: Ըստ ծաղրանկարի հեղինակների՝ Մյունխենյան գործարքին Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան գնացել են Գերմանիայի հարվածը ԽՍՀՄ-ի և կոմունիզմի դեմ ուղղելու նպատակով: Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան հավատացած էին, թե Հիտլերին կարելի է հանգստացնել մասնակի զիջումներով: Սակայն դա միայն ավելի զրգռեց Գերմանիայի ախորժակը:

Հոկտեմբեր ամսին խորհրդարանում արձագանքելով բրիտանական կառավարության՝ ագրեսորին զսպելու փոխարեն խաղաղեցնելու այս քաղաքականությանը, պատգամավոր Ու. Չերչիլը քննադատության է ենթարկում այն: Մեղադրում է, որ կառավարությունը Բրիտանիային փորձության ժամին առանց հզոր պաշտպանության է թողել, թուլացրել Ազգերի լիգան: Չերչիլը հաշվի առնելով Հիտլերի նախորդ քայլերը՝ վերազինում, Ավստրիայի զավթումը և այլն, ընդգծում է, որ նրան կանգնեցնելու հնարավորությունները վատնվել են արդեն և ճիշտ կանխատեսում է անում, որ առաջիկայում ամբողջ Չեխոսլովակիան է կլանվելու նացիստական վարչակարգի կողմից:

Հարց 2 Համադրելով երկու աղբյուրների տվյալները և ձեր գիտելիքները՝ բացատրեք, թե որքանո՞վ էր արդարացված Բրիտանիայի և Ֆրանսիայի վարած այս քաղաքականությունը, մասնավորեցրե՞ք թե ինչու՞ էք այդպես կարծում: Ներկայացրե՞ք այս քաղաքականության երկու հետևանք:

- Պատասխանի առաջին մասը կախված է աշակերտի անհատական կարծիքից և գնահատվելու է՝ ըստ հիմնավորվածության աստիճանի: Երկրորդ հատվածում աշակերտը պետք է նշի, որ հաջորդող իրադարձությունները ցույց տվեցին, որ Հիտլերը կանգ չառավ և 1939 թ. նա բռնազավթեց ողջ Չեխոսլովակիան, իսկ հետո տարածքային պահանջներ ներկայացրեց Լեհաստանին: Եվրոպայում միասնական անվտանգային համակարգ ձևավորելու Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ծրագիրը ձախողվեց, քանի որ խիստ զգալի էր պետությունների միջև փոխադարձ անվստահությունը: ԽՍՀՄ ղեկավար Ստալինը այն համոզմանն էր, թե Արևմուտքը ցանկանում է Գերմանիայի հարվածն ուղղել իր դեմ, ուստի գնաց Գերմանիայի հետ համաձայնության, և 1939 թ. օգոստոսի 23-ին ստորագրվեց խորհրդա-գերմանական փոխադարձ չհարձակման համաձայնագիրը: Խորհրդային Միությունը ստացավ ժամանակավոր ապահովություն, իսկ Գերմանիան իր նվաճողական եռանդն ուղղեց դեպի արևմուտք: